Սոցիալական Ներդրումներ

Social Investments

2020

ՀԱՏՈՐ | EDITION 14

VIVA MTS

Ռալֆ Յիրիկյան
Վիվա-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն

Ralph Yirikian
Viva-MTS General Manager

Հարգելի՛ բարեկամ,

Կրկին ժամանակն է ամփոփելու անցած տարին: Վիվա-ՄՏՍ ընկերության գործունեության հիմքում շարունակաբար եղել է և մնում է երկրի, հասարակության, համաքաղաքացիների ու հայրենակիցների հանդեպ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը: Բիզնես-գործունեության հանդեպ նման մոտեցումը և ԿՍՊ հիմքում ընկած արժեհամակարգն առավել քան արդիական են դարձել հատկապես հիմա, երբ երկրի ու հասարակության առջև ծառացել են այնպիսի լրջագույն մարտահրավերներ, ինչպիսիք են համաճարակն ու պատերազմի հետևանքները:

2020 թվականը լի էր իրադարձություններով, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով իրենց ազդեցությունն են թողել թե՛ յուրաքանչյուրիս վրա անհատապես, և թե՛ հայաստանյան շուկայում գործող ընկերությունների ու կազմակերպությունների վրա: Ցանկացած բնագավառ՝ տնտեսական, թե՝ սոցիալական, այսօր ադապտացվում է նոր իրականությանը, նոր հանգամանքներին:
Վիվա-ՄՏՍ-ը ևս, թե՛ իր կոմերցիոն գործունեության ընթացակարգերն ու մոտեցումները, և թե՛ իր բազմաթիվ սոցիալական ծրագրերը, հնարավորինս հարմարեցրել է ձևավորվող պայմաններին: 2020 թվականին մենք շարունակել ենք իրականացնել Ընկերության սոցիալական ներդրումները ամենատարբեր ոլորտներում, սակայն այս տարվա ընթացքում հատուկ ուշադրության կենտրոնում եղել են հատկապես սահմանամերձ բնակավայրերում առանցքային ենթակառուցվածքների և բնակարանաշինության ծրագրերը, որոնք նաև ընդլայնվեն են՝ ընդգրկելով շահառու համայնքների և ընտանիքների առավել մեծ թիվ: Կարծում եմ, մեր հայրենակիցների, մեր սահմանապահ գյուղերի ու համայնքների բարօրությունն այսօր թերևս ամենակարևորն է:
Վերահաստատում եմ, որ ապագայում ևս Վիվա-ՄՏՍ-ը շարունակելու է աշխատել հանուն մեր երկրի և մեր երեխաների բարեկեցիկ և ապահով ապագայի:

Dear friend,

It's once again the time to sum up the previous year. The Corporate Social Responsibility for the country, society, co-citizens and compatriots has been at the core of Viva-MTS's activities at all times. This attitude in doing business and the value system underlying the Corporate Social Responsibility are increasingly prioritized on today's agenda as the country and the society face most serious challenges, such as the pandemic and the consequences of war.

The 2020 has been abundant in developments, which have directly or indirectly affected each and every one of us personally, as well as the companies and organizations operating in the Armenian market. Every single sphere, whether economic, social, or other, are currently adapting to new realities and new circumstances.
Viva-MTS, too, has adjusted its processes and approaches, as well as it numerous social programs to the evolving conditions, to possible extent. In the outgoing year we have continued the Company's social investments in a wide variety of spheres, and yet, this year we have kept the programs pertaining to vital infrastructures and housing matters in the borderland settlements in the focus of particular attention; these programs have been expanded to embrace larger number of beneficiary communities and families. I believe the well-being of our compatriots, our borderland villages and communities is the most crucial issue today.
I reiterate the Company's commitment to work for the prosperity and the safety of our country and our children.

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
Information and Communication Technologies

•Աջակցություն «ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ» նախաձեռնությանը
Support to the “State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT” initiative
•Աջակցություն միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային
Support to the Annual Microelectronics International Olympiad
•Աջակցություն ստարտափների ինկուբացիոն ծրագրին
Support to the Startup Incubation Program

Կրթություն
Education

•Հայաստանյան բուհերի ուսանողներին կրթաթոշակի տրամադրում
Provision of tuition fee to students of universities of Armenia
•Աջակցություն Պոլիտեխնիկական համալսարանում խելացի լուծումների լաբորատորիայի ստեղծման նախաձեռնությանը
Support to the Smart Solutions Laboratories initiative at the Politechnic University
•500 սմարթֆոն հեռավար կրթության համար
500 smartphones for distance learning

Մշակույթ
Culture

•Աջակցություն «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին
Support to the “Golden Apricot” International Film Festival
•Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին
Support to “Paros” Chamber Choir of “Unison” NGO

Շրջակա միջավայրի պաշտպանություն
Environmental Protection

•Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նախաձեռնություններին
Support to environmental protection initiatives by the Foundation for the Preservation of the Wildlife and Cultural Assets

Առողջապահություն
Healthcare

•Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին
Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families
•Աջակցություն առողջապահության ոլորտում բջջային նույնականացման («eHealth» և «SDG») ծրագրերին
Support to mobile ID (“eHealth” and “SDG”) programs in healthcare
•Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ
Support in covering tuition of children with autism in partnership with the International Child Development Center

Մարզեր
Regions

•Աջակցություն գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» հետ համատեղ
Support to the house-building project for rural communities in partnership with the “Fuller Center for Housing” Armenia
•Աջակցություն Հայաստանի մարզերում համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին
Support to community infrastructure development programs in the regions of Armenia



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Information and Communication Technologies

Աջակցություն միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային
Օլիմպիադան կազմակերպվում է էլեկտրոնային և էլեկտրոնիկայի ճարտարագետների ինստիտուտի թեստային տեխնոլոգիաների տեխնիկական խորհուրդի (IEEE TTTC) հետ համագործակցաբար: «Սինոփսիս Արմենիան» օլիմպիադայի նախաձեռնողն ու գլխավոր կազմակերպիչն է: Օլիմպիադայի գլխավոր գործընկերը Վիվա–ՄՏՍ–ն է: Գլխավոր աջակիցն է «Յունիքոմփ» ընկերությունը: Օլիմպիադայի հովանավորն է «Հայաստան» համահայկական հիմնադրամը:

Support to the Annual Microelectronics International Olympiad
The Olympiad is held in cooperation with the Institute of Electrical and Electronics Engineers (IEEE) Test Technology Technical Council (TTTC). The General Organizer of the Olympiad is “Synopsys Armenia“ CJSC. Viva–MTS is the General Partner of the Olympiad. “Unicomp” CJSC is the General Supporter of the Olympiad and “Hayastan” All Armenian Fund is the Sponsor of the Olympiad.



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Education

Հայաստանյան բուհերի ուսանողներին կրթաթոշակի տրամադրում
Ծրագրի շրջանակում Վիվա-ՄՏՍ-ը աջակցություն է ցուցաբերում հատուկ կարիքներ ունեցող, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին: Ընկերությունը ստանձնում է մինչև ուսման ավարտը ծրագրում ընդգրկված ուսանողներին օժանդակելու պատասխանատվությունը: Կրթաթոշակային այս ծրագիրը նպատակ ունի կրթությունը հասանելի դարձնելու բոլորի համար՝ հիմքում ունենալով խոցելի խմբերում գտնվող ուսանողներին:

Provision of tuition fee to students of universities of Armenia
Within this program, Viva-MTS provides support to students in special needs, to orphans and to those from socially vulnerable families. The company undertakes the responsibility to support the students enrolled in the program until graduation. This scholarship aims at providing all students an access to university education, especially targeting the ones from vulnerable groups of society.

Աջակցություն Պոլիտեխնիկական համալսարանում խելացի լուծումների լաբորատորիայի ստեղծման նախաձեռնությանը
Կարևորելով ժամանակի զարգացումները՝ շնորհիվ անընդհատ զարգացող տեխնոլոգիաների և նորամուծությունների՝ Վիվա–ՄՏՍ–ի և Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միության (ՏՀՏԳՄ) միջև համագործակցության արդյունքում Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում հիմնվել է խելացի լուծումների լաբորատորիա: Այն «Silicon Mountains» ծրագրի կրթական մասն է: Խելացի լուծումների կենտրոնն առաջին փուլում պլանավորում է իրականացնել մագիստրոսական և մասնագիտական դասընթացներ, իսկ ավելի ուշ այն կհամալրվի բակալավրիատի ծրագրով, հետազոտությունների և ստարտափների էկոհամակարգերով: Խելացի լուծումների կենտրոնում պլանավորված է առաջիկա 3–4 տարվա ընթացքում ստեղծել 15–20 դասասենյակ՝ կահավորված ժամանակակից լաբորատորիաներով:

Support to the Smart Solutions Laboratories initiative at the Politechnic University
With the permanently developing technologies and innovations, the partnership between Viva–MTS and the Union of Employers of ICT, has resulted in the establishment of the Smart Solutions Center at the National Polytechnic University of Armenia. The Smart Solutions Center is the educational part of the Silicon Mountains project. At the first stage the Smart Solutions Center plans to implement master's and vocational trainings, and later on it will be supplemented by bachelor's programs, research and startup ecosystems. It is planned to create 15–20 classrooms equipped with modern laboratories within 3–4 years.









ՄՇԱԿՈՒՅԹ

Culture

Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին
«Ունիսոն» հասարակական կազմակերպությանը կից գործում է «Փարոս» երգչախումբը, որի երգիչների մեծ մասը հաշմանդամություն ունեցող, այդ թվում՝ սայլակավոր մարդիկ են: Երգչախումբը հանրության շրջանում մեծ ճանաչում է վայելում և ելույթներով հանդես է գալիս ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրի բեմերում: Վիվա-ՄՏՍ-ը, մեծ կարևորություն տալով հաշմանդամներին ու նրանց խնդիրներին, սատարում է երգչախմբի անդամների գործունեությանը՝ շարունակելու իրենց առաքելությունը և նվաճելու նոր բեմեր:

Support to “Paros” Chamber Choir of “Unison” NGO
The choir “Paros” operates under the umbrella of “Unison” NGO with most of its singers being people with disabilities, including wheelchair users. The choir is enjoying wide public renown and has given many concerts in Armenia and abroad. The people with special needs and their problems are given special attention at Viva-MTS: the company supports the members of the choir in continuing their performances and conquering new stages.



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Environmental Protection

Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նախաձեռնություններին
Վիվա-ՄՏՍ-ը և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) շարունակում են հեռավոր մարզերում կարևոր խնդիրներ լուծելու պատասխանատու գործընկերությունը: Հայաստանի տարբեր բնակավայրերում ենթակառուցվածքների զարգացումը թիրախավորած գործընկերները չափազանց կարևոր են համարում բնության պահպանության գործում նորագույն տեխնոլոգիաների կիրառումը. դա նպաստում է ոչ միայն շրջակա միջավայրի պահպանությանը, այլև բարձրացնում է էներգախնայողության արդյունավետությունն ու նպաստում համայնքային զարգացմանը:

Support to environmental protection initiatives by the Foundation for the Preservation of the Wildlife and Cultural Assets
Viva-MTS and the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) are continuing the responsible partnership for addressing the important problems in remote regions. The partners consider the targeted development of the infrastructure in Armenia's regions, the application of the newest technologies in nature protection, as extremely important. The initiative contributes not only to the protection of environment, but also increases the efficiency of energy saving and supports the community development.







ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Healthcare

Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին

Հայաստանում գործող «ՍՈՐՍ» հիմնադրամը համախմբել է հաշմանդամության տարատեսակ խնդիրներով զբաղվող հմուտ մասնագետների՝ ապահովելով աշխատանքով նեղ մասնագիտացմամբ երիտասարդ կադրերի և աջակցելով թիրախային խմբում հայտնված ընտանիքներին ու երեխաներին: Հիմնադրամի նպատակներից է հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին դուրս հանել մեկուսացումից և վերջիններիս համար ապահովել բնականոն կյանքի ընթացք: 2016 թ.-ից Վիվա-ՄՏՍ-ը մասնակցում է հիմնադրամի կողմից կազմակերպվող տարատեսակ ծրագրերի:

Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families

The “SOURCE” Fund operating in Armenia has united skilled specialists providing professional care to children with disabilities, as well as in creating jobs for young specialists in this sphere, supporting the families in the target group and helping the children. One of the purposes of the fund is to help the children with special needs and their families get out of isolation and ensure a normal life for the latter. Since 2016, Viva-MTS has participated in various projects organized by the foundation.

Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ
«Երեխաների զարգացման միջազգային կենտրոնը» նախատեսված է աուտիզմով երեխաների համար, որին 2008 թ.-ից ի վեր աջակցում է Վիվա-ՄՏՍ-ը: Այստեղ 3-12 տարեկան երեխաներին տրամադրվում է աջակցություն ակադեմիական գիտելիքների ձեռքբերման, ինքնասպասարկման ու սոցիալականացման հարցերում:

Support in covering tuition of children with autism in partnership with the International Child Development Center
The International Child Development Center is intended for children with autism. Viva-MTS assists the center since 2008. Children aged 3 to 12 are getting support in terms of obtaining academic knowledge, self-support skills and the ability to integrate into the society.

ՄԱՐԶԵՐ

Regions

Աջակցություն գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» հետ համատեղ

«Ֆուլեր տնաշինական կենտրոնը», կարևորելով համայնքների զարգացումը, Վիվա-ՄՏՍ-ի հետ համատեղ շարունակում է տնաշինական և վերանորոգման աշխատանքների իրականացումը սահմանամերձ բնակավայրերում: Աշխատանքները կատարվում են կամավորական հիմունքներով: Այս տարին առանձնահատուկ էր իր մարտահրավերներով, սակայն, չնայած այդ ամենին, գործընկերները կիրառել են իրենց ողջ ներուժը՝ հօգուտ հայրենակիցների բարեկեցության:

Support to the house-building project for rural communities in partnership with the "Fuller Center for Housing" Armenia

The "Fuller Center for Housing" gives high importance to the development of RA regions, and hand in hand with Viva-MTS, continues the implementation of house-building and renovation works in border areas. The works are done on voluntary basis. This year was special in terms of the challenges; yet, the partners have spared no effort for the well-being of our compatriots.

Աջակցություն Հայաստանի մարզերում համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին
Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը և Վիվա-ՄՏՍ ընկերությունը շարունակում են տարիների համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերը՝ միտված մարզերում համայնքների զարգացմանը: Այս տարի հատուկ ուշադրության կենտրոնում շարունակել են մնալ լուսավորության և ջրամատակարարման ենթակառուցվածքները, ինչպես նաև մի շարք վերանորոգման նախաձեռնություններ և բնակիչների անվտանգությանը նպաստող նորարար լուծումների կիրառությունը:

Support to community infrastructure development programs in the regions of Armenia
The Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) and Viva-MTS continue to implement community support programs within the framework of partnership of years. This year, the infrastructure challenges of lighting and water supply in regional communities, as well as a number of repair work and application of some innovative solutions in order to increase the safety of the residents, have remained in the focus of partners' attention.





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENTS

Ողջույնի խոսք
Welcome address 4

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
Information and Communication Technologies
Աջակցություն միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային
Support to the Annual Microelectronics International Olympiad 9

Կրթություն
Education
Հայաստանյան բուհերի ուսանողներին կրթաթոշակի տրամադրում
Provision of tuition fee to students of universities of Armenia 13

Աջակցություն Պոլիտեխնիկական համալսարանում խելացի լուծումների լաբորատորիայի ստեղծման նախաձեռնությանը
Support to the Smart Solutions Laboratories initiative at the Politechnic University 15

Մշակույթ
Culture
Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին
Support to “Paros” Chamber Choir of “Unison” NGO 19

Շրջակա միջավայրի պաշտպանություն
Environmental Protection
Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նախաձեռնություններին
Support to environmental protection initiatives by the Foundation for the Preservation of the Wildlife and Cultural Assets 23

Առողջապահություն
Healthcare
Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին
Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families 27

Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ
Support in covering tuition of children with autism in partnership with the International Child Development Center 29

Մարզեր
Regions
Աջակցություն գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» հետ համատեղ
Support to the house-building project for rural communities in partnership with the “Fuller Center for Housing” Armenia 33

Աջակցություն Հայաստանի մարզերում համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին
Support to community infrastructure development programs in the regions of Armenia 35

Social Investments 2020

Սոցիալական Ներդրումներ

Վիվա-ՄՏՍ
«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ
Արգիշտի փողոց 4/1, Երևան 0015, ՀՀ
Հեռ.՝+37460771111, +37493568777
Ֆաքս՝ +37493298021
4/1 Argishti street, Yerevan 0015, RA
Tel.: +37460771111, +374 93568777
Fax: +374 93298021
www.mts.am, info@mts.am